


Եւ ասիկա բարիք մը եղաւ իսկապէս մեր թէ՛ երիտասարդութեան համար մասնաւորապէս եւ թէ՛ գրականութեան համար ընդհանրապէս: Որքան աւելի լինի լուրջ եւ խստուն միտքերու եւ ազնիւ հոգիներու տպաւորութիւնը մեր ազգան կայմելու կանչուած սիրտերուն վրայ. այնքան աւելի մեծ պիտի ըլլայ ազգին անկէ քաղած օգուտը:




## Ս. ՅԱԿՈՒԲԻ ՆԵՐՍԷՆ

Պ. ԳԱԼՈՒՍԿԻ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ

Փետրուար 9ի երեկոյին՝ յանակնկալաւ մեր մէջ ունեցանք Ս. Արոտոյս պատուական բարեբաններէն Պ. Գալուս Կիւլպէնկեանը: Եւ զիպսոս եւ Սիւրիա այցելութեանը առթիւ ցանկացած էր անցնիլ Սուրբ Երկրէն, սեսնել Երուսաղէմը — ուր եկած էր անգամ մը միայն, կանուխ, ինը տարեկան հասակին, իր բարեպաշտ ծնողացը հետ —, երկրպագել սնօրինական Ս. Տեղեաց, համբուրել Գլխադիրը եւ սեսնել Հայկական այս նուիրական Հասասուրիւնը: Կարելի չեղաւ համոզել զինքը, որ ընդունի հանդիսական ընդունելութեան մը նուազագոյն պատիւը գէթ. իր ազնուական համեստութիւնը մերժեց ամեն ցոյց, ուղեծր եւ երգ, զոր իրեն կը պարսէինք սակայն ամենքս ի սրտէ, իբրեւ հանճարեղ եւ մեծ ազգայինի մը, եւ իբրեւ Ս. Ուխտիս բարեբարի, որ օժտեց զայն մասեմադարանի հոյակապ շէնքով մը: Ինք կ'ուզէր իբեւ լոկ ուխտաւոր ընդունուիլ Ս. Յակոբայ յարկէն ներս: Եւ այդպէս ըրաւ, արդարեւ պակասաւնով մտաւ նուիրական եւ հոյակապ սանարը, երկիւղածութեամբ եւ արտաուստառն զգածմամբ ճնրադրեց Գլխադիր գերեզմանին առջեւ. իբրեւ բարեպաշտ եւ ազնուական հայ ընտանիքի մը արտի սէր զաւակը՝ հաւաստով ընդունեց իր մայրենի եւ Սուրբ Եկեղեցւոյ օրհնութիւնը, զոր տուն իրեն, Գլխադրի խորանին առջեւ, Ս. Պատրիարքը, եւ Տ. Մեսրոպ եւ Տ. Սմբատ եպիսկոպոսունք: Իր զմայլանքը յայտնեց ի մասին Ս. Արոտոյս դարաւոր եւ գեղարուեստական հնութեանց՝ մանաւանդ զըրչագիրերուն համար որոնց հաւաքուածը նկատեց Ս. Յակոբայ բուն զանգառանը: Գոհունակ արտի զգացմամբ այցելեց ու սեսաւ իւրակեց Կիւլպէնկեան Մասեմադարանը, զոր սիրեց հոգելին. յուզուեց շողաց իր նայուածքը, երբ

կանգ առաւ կիսանդրիին առջեւ իր հայրիկին եւ պակեղին Սրբազան Գուրեան Եղիշէ պատրիարքին, որոնց յիշատակին նուիրած էր հոյակապ շէնքը: Առանձինն սեսակցեցաւ Ս. Պատրիարքին հետ: Տեղեկութիւններ առաւ վանքի կացութեան եւ կեցութեան մասին: Ըրաւ փորձ եւ ազգասէր մարդու իր բեղադրութիւնները: Վեհանձնօրէն կատարեց իր ուխտաւորի պատրաստութիւնները, եւ մեկնեցաւ Գեղիս. 11ի առաւօտուն, Երուսաղէմի եւ շրջակայից եւս բոլոր սրբավայրերը այցելելէ վերջ: Իր այցելութիւնը վաղակի անց մը եղաւ մեր մէջէն, որ տուաւ մեզի իր հաղցը սիրոյն շողիւնը, առնելով ի փոխարէն՝ Աստուծոյ եւ Ազգին այս նուիրական Տան օրհնութիւնը:



### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցնող փետրուար ամսուան ընթացքին, Ս. Արոտոյս ճօրէն ժողովը ուժը անգամներ ի նիստ գումարուեցաւ իբրեւ վարչական Մարմին իսկ իբրեւ Կրօնական Ատեան՝ երկու անգամ. նոյնպէս մուտ մե. Խորհուրդը՝ մէկ անգամ. իւրաքանչիւրը զբաղելով իր իրաւաստութեան մէջ եղած խնդիրներով:

● Ուր. Յունի. 26. — Անուանակոչութեան տօնին առթիւ, առաւօտուն, ժամերգութիւն կատարուեցաւ Մայր տաճարին մէջ. իսկ Ս. պատրարգը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մէջ. Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, ուր Ս. Պատրիարքը եւ Միաբնութիւնը գացին Հրաշափառի թափօրով: Ժամարարն էր Տ. Մեսրոպ Սըրբազանը Ս. Պատրիարքը քարոզեց ըստ աւուրն պատշաճի, Յիսուս անուան մէջ ցուցնելով Քըրիստոսի փրկական պաշտօնին ամբողջ նկարագիրը: Պատրարգէն վերջ ամբողջ միաբնութիւնը եւ աշակերտք թափօրով զարձան վանք եւ Եւրան պատրիարքարան, ուր կատարուեցաւ Տընօրնէքի աւանդական կարգը:

● Եր. Յունի. 27. — Քաղաքապետ Բաղըզ Գէյ նաշաշիկի այցելեց Ս. Պատրիարքին:

● Կիր. Յունի. 28. — Տ. Զոզն վրդ. քարոզեց Ս. Յարութեան տաճարին մէջ. պատուեց նաբուզողոճոճոսրի երազը, եւ առարկայօրէն մեկնեց զայն. ցուցնելով մեր ազգային ներկայ կեանքին հետ աւոր ունեցած նմանութեան եզրերը:

● Դշ. Յունի. 31. — Եղիպտական նոր Հիւպատոսը առաջին այցը տուաւ Ս. Պատրիարք շօր:

● Կիր. Փետր. 3. — Տ. Հայկազուն վրդ. քարոզեց Մայր Տաճարին մէջ, Փիլիպ. Դ. Գրուխ 11-15 համարներէն առնելով նիւթը. բացատրեց թէ միմիանց հանդէպ զժգոհութեան պատճառը ստոյգ եւ ներքին իրերաճանաչութեան պակասն է յաճախ:

● Կիր. փետր. 11. — Ս. Յարութեան տաճարին մէջ քարոզեց Տ. Սերովբէ վրդ. ՎՄԵ քարոզեցուք զՔրիստոս բնաբանին լրայ. բացատրեց թէ ոչ միտքը և ոչ ալ խիզճը չեն կրնար բնաւ կատարել կրօնի զգացման գործը. աստուածամայրին խորհուրդը միայն կրնայ բարձրացնել մարդը:

● Գշ. փետր. 13. — Ս. Ղեւոնդեանց տօնին առթիւ Ս. պատարագ մատուցուեցաւ Ս. Էջմիածին եկեղեցիին մէջ. Ս. Պատրիարքը քարոզեց, բացատրելով հոգեւորականութեան դերը ազգերու կեանքին մէջ և Յետոյ կատարուեցաւ հոգեհանդիստ, Հանգ. Ղեւոնդ արք. Դուրեանի մահուան քառասունքին համար — Ս. Պատրիարքը, ուսուցիչ վարդապետներու ընկերակցութեամբ, ցերեկին պատուեց ժառանգաւորաց սեղանը, և, օրուան տօնէն ներշնչուած՝ խրատ խօսեցաւ աշակերտներուն:

● Եշ. փետր. 15. — Ս. Վարդանանց տօնին առթիւ, Ս. պատարագի միջոցին քարոզեց Ս. Պատրիարքը, հատուաներ կարգաց եղիչէի ոսկեմատեանէն, և բացատրեց օրուան տօնին ազգային և կրօնական իմաստը — Երեկոյն, ժառանգաւորները՝ վարժարանի սրահին մէջ մեծ յաջողութեամբ ներկայացուցին Տիգրան կամարականի գրած Վասակի վերջին ժամը պատկերը և Պէշիկիաշիանի Արշակ Բ. թատերգը:

● Ուր. փետր. 16. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ասորաց եկեղեցիին մէջ, ուր քարոզեց Տ. Շաւարշ վրդ.՝ սրտի սրբութեան և հոգեւոր կեանքի մասին: Ս. Պատրիարքը փոխադարձ այցելութեան գնաց եզիպտական նոր հիւպատոսին:

● Կիր. փետր. 18. — Բուն Բարեկենդանի առաւօտուն Ս. Պատրիարքը քարոզեց Մայր տաճարին մէջ, մեկնաբանութեն ընդլայնելով լեռան քարոզի մէկ մասը:


● Դշ. փետր. 21. — Տ. Սմբատ Ս. և Գ. Նուրեան Յովսէփ գային իրաւաբանական խորհրդակցութեան մը համար, և վերադարձան Երեկոյն — Կէսօրէ վերջ Հայկէջաց վանքի մեծաւորը այցելեց Ս. Պատրիարքին:

● Եշ. փետր. 22. — Ս. Պատրիարք շօր կողմէ, Տ. Մեսրոպ սրբազան և Տ. Կիւրեղ վրդ. Յըրանչիակեանց Ս. Փրկիչ եկեղեցին երթալով ներկայ գտնուեցան Պելչիբայի օղբացեալ Այվերտ Ա. թագաւորին համար կատարուած հոգեհանդասեան պաշտօնին: — Առաւօտուն, Մայր տաճարին մէջ կանանց քարոզ խօսեցաւ Տ. Մկրտիչ սրբազան. Երեկոյն, ընդհանուր ժողովուրդի համար խօսեցաւ Ս. Պատրիարքը: — Յերեկին, Գահիրէի Աղզ. Թեմական ժողովոյ Ատենայիս Գ. ձանդիկ Չազըր այցելեց Ս. Պատրիարքին:

● Շր. փետր. 24. — Ս. Թէոդորոսի տօնին առթիւ, Ս. պատարագը մատուցուեցաւ վանուցը Ս. Թորոս մատան մէջ, ուր կը պահուին Ս. Աթոռոյ 35000 աւելի ձեռագիրները: — Ժառանգաւորք առաջին անգամ ըլլալով երգեցին

Ջուզայի պատարագը, զոր ձայնադրած և հրատարակած է Սր. Էմի Արզար, կալիթայի դիտուան և ազգասէր հայուհին: Ս. Պատրիարքը տեղւոյն և պարագային յարմար հակիրճ քարոզ մը խօսեցաւ, հոգեհոնջելով յիշատակը Թորոս արքայորդի իշխանին, որուն անուան կանգնուած է այսօրքրիկ սրբավայրը, և բազմաճաղար զբիշներուն, սրտը իբրև հոգեւոր զինուորական մարտիկներ, հաւաքուած են հոս, նահատակ դիտուարի մը հոգւոյն հովանին տակ — Երեկոյն «Լաշափառ»ի թափօրով գայիւնը Ս. Յարութին, ուր կատարուեցաւ կրթականատի պաշտամունք:

● Կիր. փետր. 25. — Ըստ իրաւական սովորութեան, այսօր ժամերգութիւն և պատարագ կատարուեցան Ս. Յարութեան մեր վերնամատուռին մէջ և Պատարագէ վերջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք շօր հանդիսաւոր երբազարձ մեծ թափօր կատարուեցաւ Ս. Դերիմանին շուրջը:



**Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ռ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

Շնորհակալութեամբ կ'աճանագրենք նետեալ նուէրներ

**Բարեկաշտական**

Երուսաղէմէ Այնթապի Տիար Յակոբ Քիւրճեանէ Լիւա Պաղ. 1:

Լիմայէն (Կերու) Տիար Պետրո Շէրիսեանէ Տոլար 2, 50:

Երուսաղէմէ Տիգրանակերտի Տիար Յակոբ Պողոսեանէ Պաղ. Դւր. 50:

Աղեւանդերիայէ Օր. Լիւսի Ս. Մամուրեանէ Լիւա եղիպց. 1:

Բոսալայէն (Սուսան) Տիկ. Փառանձեմ Գործեանէ Պաղ. դր. 30, Տիկ. Լուսին Գործեանէ 80, Տիար Գ. Եկիպաւեանէ 20. Օր. Արուսեակ Շալվարեանէ՝ ներմակ լարի վրայ երկու կտոր ձեռագործ:

Ճանթըն Սիբիլէն (Ամերիկա) Տիար Սուրէն Բարուցակեանէ Տոլար 1:

Պրուիսիէն (Ամերիկա) Տէր Եւ Տիկ. Պողոս Հեփմեանէ Տոլար 1:

Յովսէփէն Կարնեցի Տիար Անդրանիկ Պալայեանէ — մասաղազին Լիւա Պաղ. 1, 50:

Երուսաղէմէ Կիւրիցցի Այրի Տիկ. Անթառավ Արեւեանէ պատարագոյ 1 Լիւա, մասաղազին 1 Լիւա:

Երուսաղէմէ Այնթապի Այրի Տիկին Լուսիա Եւ որդին Պ. Սեդրակ Հրաչեանէ Լիւա Պաղ. 1:

Երուսաղէմէ Օրսուլոյ Այրի Տիկին Ազարա Խաչիկեանէ Լիւա Պաղ. 1:

Երուսաղէմէ Կղեմացի Այրի Տիկին Ազնի Ե. Տէր Գրիգորեանէ Լիւա Պաղ. 1:

Երուսաղէմէ Սեբասացի Տիար Արամ Տառնապեանէ Պաղ. Դւր. 10:

**Սիւնիք**

Ամերիկայէն Տիար Մ. Գայրգնեան ՍԻՈՆԻՆ կը նուիրէ 3 ամերիկեան տոլար: